

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Եաբունակութիւն).

Լ. Պ.

Ո-ղեկիցները ճարածապահութեանը. Բերդը. Գեղեցիկ գլուխան. Պահապատը. Վարական. էամ թանահասով լան. Նորա նկարները. Մասունքը. Վահ-  
+ի պատճութեանը. Նուերները. Շողէնի և Բագրայէի սիստմունչը:

Ուղեկիցներիս ընկերակցութեամբ, խմբովին, դուրս եկանք  
սուրբ Աստուածածնի անտառից գէպի բարձրագիր կանաչ լեռ-  
ները, ուր մեղ յաճախ պատահում էին կազաւների երամներ  
և Բաշքեանդ գիւղի հօտերը: Այդ դալար արօտատեղերում  
սիւռուած արածում էին հօտերը և մերթ իւրեանց բառայով  
դղրդեցնում էին վայրի ձորերը: Այդ հիասքանչ վայրերով մենք  
յառաջ էինք գնում: Տանուտէր Մուրադը խորասուզուած իւր  
մոքի մէջ, մի ինչ որ խորհում էր:

— Ի՞նչ ես մոտածում, Մուրադ, գիմեց նորան մինը խմբից:

— Ես մոտածում եմ, պատասխանեց Մուրադը, թէ մեր Դա-  
րալազեազում այսքան վանքեր կան, որը հայերի և որը թուր-  
քերի ձեռքում, որոնք անտէր անտիրական մնացել են ամայի,  
հսկող չկայ, նայող չկայ, տէր և տիրական չկայ, հասկա մինչեւ  
երբ պէտք է այսպէս մնան խեղճ վանքերը, որոնց շինելու հա-  
մար այնքան ճիգ և աշխատանք են թափել մեր նախնիքը. . . .  
Սրանք որ քանդուեն, անհետանան, հապա էլ ինչով կիմացուի  
թէ այստեղ Հայաստան է եղել. . . .

Ինչի՞ են քանդուում, պատասխանեց երկրորդը խմբից, վաղը,  
միւս օր մի մի վարդապետ կգայ էջմիածնից և կնստեն վանքե-  
րում և տիրութիւն կանեն:

— Հապա վարդապետին ապրուստ չէ՞ հարկաւոր, ով կտայ  
նորան հաց, ջուր, գիմադրեց Մուրադը. շատ վանքեր, որոնք  
իւր ժամանակին շաա հարուստ են եղել կալուածներով, այժմ  
հող չունին, ուստի օր չունին, եկամուտ չունին: Վարդապե-  
տը և իւր միաբանութիւնը ընչով ապրեն:

—Թող մի մի վարդապետ գան նստեն փոքրիշտուէ նշանաւոր վանքերում, նորանց ապրուստը, հողը, հացը մենք կտանք, ասաց մի երրորդը, միթէ տուողը մենք չենք Արգեազու սուրբ խայի վանահօրը, Գնդելազի վանահօրը, Աղաումի վանահօրը և ուրիշ տեղերից եկող պտտառող վարդապետներին:

—Քո ասածը ճշմարիտ է, հաստատեց Մուրադը, բայց Եջմիածինը վարդապետ կուղարկի միայն այն վանքերը, որոնք ուխտ ունեն, եկամուտ ունեն, ժողովուրդ ունեն: Այդպիսի վանքերը անտիրական չեն մնալ: Խոկ մեր Աստուածածինը, Նատինու վանքը, Ղօշավանքը, Ղարավանքը, Արատեսի վանքը և սացա նման անապատները ինչո՞վ կարող են վարդապետ պահել:

—Հապա ԲՇնչ կլինին այս վանքերը, պէտք է մնան անտէր, պէտքէ քանդուին... հարցրեց մի այլը:

| Իհարկէ պէտքէ քանդուին քանի տէր չունին, տիրական չունին, պահպանող չունին, շարունակեց Մուրադը. Վերջը քանդուելու են, բայց գաւառապետը և կառավարութեան այլ գործակատարներն եթէ գոնէ սաստէին Դարալագեազի անիրաւ թուրքերին չքանդել հայոց վանքերն ու եկեղեցիները, մէջը չպահել ոչխար, ապրանք, քարերը չտանել տուն և գոմ շինելու, ելի յոյս կար որ նորանց քանդուիլը կյետաձգուէր:

—Ա՛յ, վերջին խօսքերիդ հաւանեցի, Մուրադ, ասաց մի ուրիշը. ճշմարիտ է, դորանից հեշտ բան չկայ որ գաւառապետը թուրքերին սաստէր չապականել և չքանդել հայոց վանքերը: Տէրութեան ծառայողների մի խօսքը կարող է հեշտութեամբ զապել թուրքերին, որոնք կիմանային թէ հնութիւնները սուրբ տեղեր են, ձեռք տալ կարելի չէ:

—Հապա, ճիշդ է, շարունակեց Մուրադը, քանի անգամ տեսած եմ որ զանազան ազգերից հետաքրքիր մարդիկ եկել են վանքերը և բերդերը տեսել, գրել ու գնացել են: Եթէ որ հնութիւնները հարկաւոր բաներ չեն, ինչի՞ հապա այդ մարդիկ գալիս են այցելութեան, խոկ եթէ հարկաւոր են—ինչի՞ չէ հսկում իշխանութիւնը. ԲՇնչ անենք թէ հայոց վանքեր են, չէ որ հին սրբատեղիներ են:

Վերջին խօսակցութեան վերայ բոլորն էլ լռեցին, կարծես

իւրաքանչիւրը խոստովանում էր իւր մոգում Մուրադի խօսքերի ճշմարտութիւնը, համոզուում էր որ արդարն, կոտովարութեան գործակատարները, նոյն և տեղական պօլիցիուկան իշխանութիւնը այնքան անհոգ են, այնքան սառն են, այնքան նսեմ գաղափար ունիին հնութեանց կարեռութեան վերայ, որ անզգայարար և սառնաբութեամբ են նայում թուրքերի վանտալական ձգտումների վերայ, որոնք նոցա աչքի առաջ, առանց քաշուելու, առանց վախենալու քանդում, կործանում են հայոց հոյակաղ վանքերը և կոմ դարձնում են գոմ անասնոց համար, մի խօսքով սրբապղծում են դարեռը սրբավայրը...: Լուռ էին բոլորեքեանք՝ երբ Մուրադը սկսեց երգել մի տիրագին երգ, որով ցրեց խմբի վրայից խորհրդաւոր լուռ-թեան ճնշումը:

Եւ այսպէս քայլ առ քայլ իթանք առաջին առուակի ձորը — Ղզբուլաղ — որ այդպէս է կոչվում ըստ որում առուակի իրաստ սե և մանրափոշի աւազի մէջ պղնձի աւազի խառնութը փոյլում է արեգակից ոսկեփայլ շիւղով: Ղզբուլաղը ուսոգում է բերդասարի արեւմտեան ստորոտը, որտեղից մենք նայում ենք նորա սուր, ժայռոտ գագաթի վերայ: Բերդասարը կոնաձեւ բարձրանումէ երկու առուակների մէջ: Նրկու առուակներից, բերդից ներքեւ, կազմուում է մի առու և հոսումէ դէպի Բաշքեանդ, Օրթաքեանդ և Գեշիշքեանդ:

Բերդասարի լանջերը այնքան մօտենում են ուղղոհայեաց դրութեան, որ միայն հիւսիսային կողմից կարելի է բարձրանալ, ուր ուղղուեցինք և մենք: Գագաթը երեք կողմից ժայռապատ է, իսկ հիւսիսից կրապատ պարիսպ: Այդ կողմում պարիսպները երկու են, ստորին և վերին: Աերջինը կրապատ քարաշէն է՝ երկու երեք տեղ արդէն նեղ քանդուած վերից վայր:

Մենք թեքուեցինք դէպի արեւելահարաւ անկիւնը, ուր մուտքը կազմում է մի նեղ անցք, երեք ահազին քարերի տակից կուզէկուզ մոնելու համար: Մտանք ներս, Բերդի ներսը անկանոն քառակուսի: Հարթ տափարակ է, 50 քայլ տրամագծով: Նուրջը բնական ժայռոտ բուրգեր են, իսկ ուր նոքա չկան, այնտեղ շինած են արհետական կրաշաղախ բուրգեր: Տափա-

բակի կենդրոնում, երեք չորս ահագին քարերի շուրջը եղած են և այժմ արդէն խոնարհուած մինչև 40—50 հատ կամարակապ, կրաշաղախ, քարաշէն սենեակներ։ Նոցանից երկուոր հարաւոյին կողմում դեռ ևս ամբողջ են, կենդրոնական մեծ քարերից հիւսիս երեսում են մի խոր և լայն կրապատ հոր և սորա մօտ—ձուածեւ կրապատ լայն ջրամբար։

Սոքա են բերդի բոլոր շինութիւնները, սակայն ոչ մի խաչ, ոչ մի արձան և ոչ մի արձանագրութիւն որոնել այս տեղի զուր եղաւ, Բերդի արեւմտեան և արեւելեան լանջերում կան երկու աղբիւր, Նայեցէք բերդից դէսի արեւելեան ստորոտը, տեսէք ի՞նչ խոր անդունդ է, ուր արձաթափայլ առուակը հազիւ է երեսում և ուր Գէտվուր դամի—անհաւատի տուն— կարծես մի փաքրիկ թռչուն լինի խոր ձորի մէջ նստած։ Գեավուր դամին մի մատուռ է հաստարակ քարից, փայտէ ձողերով ծածկուած, որի մէջ կան մի քանի խաչքարեր։

Հարաւային կողմից ձեր աչքերի առաջ բացուում է զմայլելի տեսարան, այն է Արփաչայի ձորը և գետը, նորանից վեր կնիշիկի, Խաչիկի և Կորագիզի բարձրութիւնները և այլն։ Որ կողմից նայէք։ ամեն աեղ թէ մօտ և թէ հեռու գեղեցիկ տեսարան է բացուում ձեր առաջ—կանաչ բլուրներ, ժայռոտ լեռներ, խճճուած ձորեր, խիտ և անօր անտառներ, օձապտոյտ առուակներ։

Ոչինչ պատմական տեղեկութիւն չունենալով այս բերդի մասին, այսքան և եթ կարելի է ասել թէ արդեօք այս բերդի համար չէ՝ Օրբելեանի ակնարկը «Ն գաւառամէջն Վայոց ձորոյ, մերձ ի թռուրն որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեան ի գետամիջին Եղեգեաց և Մողանի»։ Կամ սոյն այս գլխի վերնագիրը «ի գետամիջին Եղեգեաց և Մողանի, մերձ բլրին, ուր ամրոցն էր, \*), Երկու գետերի մէջ այժմ ոչ մի բերդ ինձ յացանի չէ, բացի այս՝ Բաշքեանդի ամրոցը, վասնորոյ կարծում եմ որ Օրբելեանի յիշածը այս ամրոցի մասին է։

իցնելով Նզրուշաղի ձորը՝ մեջք վերադարձանք Բաշքեանդ կրկին մեր գնացած ժայռոտ նեղ ճանապարհով: Այդ նեղուցը անուանում են մօտակայ Հայերը Պառ և էտի և հետեւաբար աւանդում են թէ Պուօշ իշխանը ջարդել է իւր թշնամիներին, թէ վերը նկարագրած բերդը Պուօշ իշխանին է և թէ վերջապէս նա բնակուումէր Բաշքեանդում այն լաւ տան մէջ, ուր բացուել են առիւծի և վագրի արձանները և շինութեան լաւ քարեր: Պուօշ քեարի բառի վերաբերութեամբ խօսումէ և Զալալեանի գիրքը \*):

Սակայն Հայերից շատ շատերը Պուօշեանի տեղը ցոյց են տալի ոչ թէ մեր նկարագրած Բաշքեանդի գլուխը, այլ Կնիշիկ գիւղից 0ղբին գիւղի վրայով նախիջեան տանող ճանապարհի վերայ, Խողուան գիւղից ցած՝ ժայռապատ ձորը: Հայերից սմանք ևս բոլորովին հերքում են այդ պատմական աւանդութիւնը և հաստատում են որ տեղական թուրքերը ամեն մի ժայռոտ ամուր տեղ անուանում են և էտի, իսկ բրդանման ժայռերը և քարերը կոչում են բուրջ: Ուրեմն Բաշքեամդի գլուխը, իրեւ այդպիսի մի ամուր տեղ, կոչվումէ Բուրջ+էտի (որ Հայերին հաճելի է գարձնել Պուօշեանի):

Բաշքեանդից գուրս գալով գէպի արեելք, ճանապարհը անցնումէ բլրակների և նորանց կազմած ձորերի միջով, մինչեւ վերջապէս 6—7 վերստից յետպ մեր առաջ բացուում է Ղարավաները: Վանքի բոլոր շինութիւնը կազմած է սև քարից, որ առիթ է տուել աւեղական թուրքերին և սորանց հետեւող Հայերին անուանել նորան Ղարավան+—Սև վանք: Բայց նորա իսկական անունն է Թանահատի վանք, սուրբ Ստեփաննոսի անունով:

Վանքը կանգնած է մի բլրակի վերայ թրքաբնակ գիւղի մէջ, որ նոյնպէս կոչվում է Ղարավան+: Խւր շուրջը չունի նա պարիսպ և ոչ էլ գաւիթ: սակայն հաւանական է որ Հարաւային կողմի աւերակ գարձած շինութեան հիմնապատերի մնացորդը լինի գաւթի տեղը, ուր այժմ թուրքերը շինել են կալ: Վանքը սրբատաշ է և գմբեթաւոր, ունի արեւմտեան կողմից մի

(\*) Զալալ. Ճանապար, հ. Բ. Երես 149.

Հատ մուտք, Կամարների արտաքին ծածքը քանդուած է, ուր երեսում են պատի մէջ հագուցած դատարկ կարսոներ, որոնք իւրեանց մեծութեամբ լցնում են կամարների գլուխը, և որոնք եթէ յլինէին, այն ժամանակ հարկաւոր կրինէր քարերով լցնել այդ դատարկութիւնները հաւասարցնելու, ուրեմն ահագին ծանրութիւն՝ դնել կամարների վերայ, Գմբեթի ծայրից նոյնպէս թափուել են քարեր, Այս լնաօներից վաճառքի ներսը այնուամենայնիւ խախտուած չէ, միմիայն հարաւային, կամարից մի հատ քար ընկնելով ծակել է նորան:

Հարաւային պատի վերայ արտաքին կողմում երեսում է արեկ ժամանոյց, բայց առանց հայկական տառերի: Սորանից վեր քանդակած են դէմ առ դէմ երկու կանգուն աղաւնի, որոնք կտուցները մօտեցրել են իւրեանց առաջ դրած սկիզի նման մի ամանի մէջ: Սորանից փոքր դէպի արեմուտ բազէն թշուառ կագաւին ճանկերով բռնած կտցահարում է: Խոկ կաթուղիկէի վերայ, հարաւային կողմից, կիսաբաց թևերով սրաթուից արծիւը մագլների մէջ ամուր բռնել է խոյին: Սորանից դէպի արեմուտ կատաղի առիւծր յարձակուելով ամեցի ցուլի վերայ՝ խեղտում է նորան: Նոյն գմբեթի միւս կողմերի վերայ նկարած են եղան գլուխ, առիւծի գլուխ և երկու աղաւնի:

Մանելով վանքի ներս՝ դուք կատանէք որ նա շատ մեծ չէ, կանգնած չորս որմնակից սիւների վերայ, աւագ սեղանը շատ ցածր է և զուրկ վէմ քարից: Ունի վեց խորան բոլորն ևս փոքրիկ սեղանով և փոքրիկ վէմ քարով, Երեսումէ որ նոքա ևս պատարագ մատուցանելու համար են: Նոցանից երկու խորան յետին գասումն են, արեմտեսն դրան աջ և ձախ կողմում. Երկուսը—աւագ գասում, սեղանի աջ և ձախ կողմում, խոկ վերջին երկուսը՝ սորանց վերայ իբրև երկրորդ յարկ: Վերջինների մուտքը հինգ հինգ աստիճաններով բարձրանում է ուղղակի աւագ սեղանից:

Թանահատի, Արետեսի և այլ վանքերի բեմաւոր խորանների շատութիւնը մի հանգամանք է յիշեցնում ինձ: Այդ խորանները, ինչպէս վերը յիշեցի, յարմարեցրած են պատարագ մատուցանելու: Եթէ այդպէս է, Թանահատի վանքում միանուագ

կարելի էր եօթն տեղ պատարագ մասուցանել, կիրակոս վարդապետ Գոնձակեցին պատմում է, որ Մխիթար Գօշի ժամանակ, արևելեան եկեղեցիներում սուբք պատարագը չէին մատուցանում սարկաւագով և գպրով, այլ քահանայք միմեանց սպասառում էին և իրեւ թէ այդ սովորութիւնը յառաջացել է Տաճկաց բռնութիւնից, «որ ոչ տային համարձակ պաշտել զպաշտօնս իւրեանց քրիստոնէից, այլ և ոչ զդրունս եկեղեցեաց թողուլի բաց ի ժամ սոսկալի խորհրդոյն, զի մի ոճիրս ինչ գործեսցեն այլազգիքն, \*):

Նատ անգամ ես այցելած եմ Ղարավանքին և ոչ մի անգամ չեմ տեսած որ գիւղաբնակ թուրքերը, միւսերի նման, կամ ապականէին նորտն, կամ անասուններ պահէին մէջը կամ խոտ դարսէին և այլն: Ոյդ մի միսիթարական երեւոյթ է, որ բացառութեարող չեմ: Վանքը ուխտի օր և ուխտաւորներ չունի, երեւի երկար տարիների ընթացքը մոռացութեան տուած է տեղական հայ ժողովրդին:

Վանքից գուրս, նորա հիւրիսային պատին կպած է մի գեղեցկաշէն մստուռ, որից մնացել են արեւմուեան դրան և հիւսային կողմի կամարները. իսկ արևելեան պատը իւր կամարով թուրքերը քանդել փորել են: Զալալեանի գիւղը կազմելու ժամանակ այս մատուռը երեւի ամբողջ է եղել, գոնէ քանդուածի մասին, ոչինչ չէ յիշուում նորա մէջ: Նոյն մատրան մէջ լիքն է քարակոյոյ և հողակոյա, ուստի չէ երեւում նորա մէջ ոչ մի տապանաքար: Վերջինիս լինելու կամ չլինելու մասին Զալալեանի գիւղը ոչինչ չէ խօսում:

Մատրան արեւմուեան դրան վերը կիսաբոլոր քարի վերայ քանդակած է հետեւեալ տեսաբանք: Մի երիտասարդ լույն նըման գլխարկով, ձիու վերայ հեծած, իւր նիզակը ցցել է իւր առաջ կանգնած առիւծի բերանը, որ իւր առաջի աջ թաթով ամուր բռնել է նիզակի կոթը: Առիւծից վեր նկարած է մի սիրամարդ, սորա առաջ մի թոշուն: Զիու բաշի վերայ մի այ-

(\*) Կիրակոս Վ. երես 85: Վենետիկ:

ծեամ, իսկ յետեի կողմում մի թուզուն: Այս է թանահատի արտաքին և ներքին նկարագրական կողմը:

Վանքից դեպի հարաւա մի քանի տասնեակ քայլ հեռու, հանգստաբանի մէջ կան խաչքարեր: Իսկ դեպի արևմուտք, փոքրիկ ձորակի միւս կողմում բլրակի վերայ կան մահարձան-ներ, որոնց մինի վերայ գրած է «Դաւիթ քահանայ Արշեցէք յաղօթն», Երկրորդի վերայ «Ներսէս քահանայ որ տարածամ փոխեցաւ առ Քրիստոս, Աստուած ողորմի թ. ԶԽԻ» (74): Երրորդի վերայ միայն «թ. ԶԽԶ. (74)»: Հաւանական է, որ այս բլրակի հանգստաբանում լինի Սօգ աւանում Սիւնեաց եպիսկոպոսին սպանող Հերատուկ կնոջ գերեզմանը, ըստ որում Օրբելեանը ասումէ «Եւ եկեալ հանդէպ վանացն յարևմատն կոյս ձորակին փորեալ զտեղին և այլն» \*):

Այժմ գիմենք Թանահատի վանքի պատմութեանը, որ կազմել եմ Օրբելեանի պատմութիւնից և նոյն իսկ վանքի արձանագրութիւններից: Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը, քաղելով Սևանայ Սուրբ Մաշտոցի պատմութիւնից, յիշատակում է, որ նախկին Ժամանակներում պայծառանում էր երկնահրաշ կարգերով հռչակաւոր Թանահատի վանքը, որ կար Սիւնեաց գաւառում, լերան ստորոտի մի բարձրաւանդակի վերայ: անտառի մէջ: Միաբանութեան անդամները մշտապաշտօններ էին, հեռու ամեն տեսակ փափուկ կերակուրներից, իւրեանց պէտքերը գոհացնում էին, այն ևս օրը մի անգամ, երեկոյները, ցամաք հացով և լոկ ջրով: Բայցի սպասաւորներից, ոչ ոք նոցանից գուրս յէր գալի վանքից: Նատ անգամ՝ յարգուած են, նոքա Սիւնեաց իշխաններից և եպիսկոպոսներից, սակայն նոքա յանձն չէին առնում մօտենալ թանի, պանրի և իւղի, այլ շատանում էին բանջարով և ունդերով: Եւ որովհետեւ նաև կտրուած էին, ուստի Թանահատ կոչուեցան և վանքն ևս նորանց անունն ստացաւ:

Օրբելեանը շարայարումէ որ ինքը նոյն վանքի արձանագրութիւններից իմացել է, որ վանքը շինուել է հայկական

(\*) Օրբել. Պատմ. գլ. 1.Ա.

թուականից չը հարիս տարի առաջ։ Հայկական թուականի սկիզբն եղաւ Փրկչական թուականի 551 թուին, ուրեմն, ըստ Օրբելեանի, Թանահատի վանքը շինած է 150 տարի Փրկչառուից յետոյ։ մի շատ հետաքրքիր երեսոյթ՝ եթէ միայն ուղիղ է Արևնեաց պատմագրի ասածը։ Նարունակելով իւր պատմութիւնը, Օրբելեանը ասումէ, թէ վանքումն եղել է վանահայր Մխիթար անունով մինը, որ իւր ճգնութեամբ անցել էր առաջինեաց բազմութիւն, հնազանդեցնում և վանքին ծառայեցնում էր վայրենի գուղաններին, արջերին և գայլերին։ Եւ սուրբ Հայրը շարունակ գնում էր անտառ և նստում էր վանքի հանդէպը, ուր վայրիքը և գաղանները գոյլիս շրջապատում էին նորան և խնդրում էին աղօթք և ողորմութիւն։

Նատ արքիներից յետոյ մեռնում է սուրբ Հայրը և նորա մարմինը՝ փոյտէ արկղի մէջ դնում են եկեղեցուն մօտիկ փոքրիկ բլրակի վերայ սրբաշէն, գետնափոր վերապի մէջ, որ մինչեւ պատմաբան Օրբելեանի ժամանակ (ԺԴ դարու վերջը) մեծամեծ բժշկութիւն էր լինում նորա շիրմի վերայ \*), Մի այլ տեղ նոյն Օրբելեանը Մօղ աւանում սպանուած Ստեփաննոս եպիսկոպոսի մասին խօսելով՝ ասումէ որ նորա մարմինը տեղափոխեցին Թանահատի վանքը. ուր նորա վերայ շինեցին մի փոքրիկ մատուռ, որ յետոյ 729 թուին տեղւոյն բնակիչներ շինեցին գեղեցիկ յօրինուածով գմբեթայարկ եկեղեցի և նահատակ եպիսկոպոսի տապանը գրել են նորա հիմքում \*\*):

Վանահայր Մխիթարի պատմութեան մէջ նշանաւոր է և այն կէտը, որ այն ժամանակ Թանահատի շուրջը եղել է անտառ, ուր երեխմնակի նստում էր յիշեալ հայրը։ Ժամանակը գարերի ընթացքում ահագին փոփոխութիւններ է ձգում երկրի վերայ, մանաւանդ անտառի վերաբերութեամբ, որ հեշտութեամբ կարող է երեան գալ և առաւել հեշտութեամբ ոչընչանալ։ Երեսում է, որ Դարալագեազի շատ տեղեր, որ այժմ մերկ մակերևոյթ է, երբեմն ծածկուած են եղել անտառներով։ Թա-

(\*) Օրբել. Պատմ. Գլ. 16.

(\*\*) Օրբել. Պատմ. Գլ. 1.Ա.

նահատի կամ Ղարավանքի շուրջը ահագին տարածութեամբ մերկ ժայռեր, վարելահողեր և արօտատեղեր են, առանց անառի մի նշայի անգամ :

Օրբելեանի վերոյիշեալ խօսքերից երեսումէ, որ այժմեան Քանահատի վանքը տեղւոյն բնակիչներից շինուած է 728—1279 թուականին։ Սակայն եթէ այս համեմատենք վանքի այժմեան արձանագրութեանց հետ կդանենք փոքր տարրերութիւն բառերի մէջ, ըստ որում պատերի վերայ կան այժմ՝ 700 հայկական թուականից արձանագրութիւններ։ Ուրեմն այժմեան չինութիւնը վերջիս թուականից առաջ ևս կանգուն է եղած։

Եկեղեցւոյ շինութեան իօկական տարին կարող էր ցոյց տալ մի արձանագրութիւն՝ վանքի արեմտեան պատի արտաքին երեսում, գոնիղ դէպի հիւսիս, բայց տարաբաղդաբար նորա սկիզբը կորած է (կորած է եղել նաև 1857 թուին Զալալեանի զիրքը կարմիլու ժամանակ, որի մէջ սորա մասին յիշատակութիւն չկայ) և վերջին տառերը ջարդուած կարծես գիտմամբ, այնպէս որ թուականը յէ երեսում։ Այդ կարեռի արձանագրութեան սկիզբը պարունակող քարը 1857 թուին եղել է իւր տեղ պատի մէջ, իսկ իմ ժամանակ ընկած, թաղուած էր հողի մէջ։

Արձանագրութեան պատճէնը այս է . . . «Թագաւորին և խաչեցելոյն Աստուծոյ ի յարքայութեան մեծին և բարեպաշտին Ապաղայ լանին, հայկազնեայ տոհմիս և սեռիս Թորգոմեայ ի կաթուղիկոսութեան տեսառն Յակոբայ և յարիկական և քաջատոհմ իշխանութեան Պռօշայ և որդւոյն Պապաքին Հասանայ մանկան Էաչոյ շնեցաւ սուրբ Եկեղեցիս բնակարան փառացն Աստուծոյ և յարկ սրբոյն Ստեփաննոսի յերկար կենդանութիւն պարոնացն և սահմանեցաք փոխման Գ. օր ամէն Եկեղեցիք պատարագել ի Քիստոս մեծ պարոնին մերոյ Պռօշայ։ Կատարիչք դրայս օրհնին յԱստուծոյ. մեք պարոնայքս և միաբանքս արձանագրեցաք . . . . (ջնթուած)։

Թէպէտ այս արձանագրութիւնը թուական չունի, սակայն նորանից երեսումէ, որ այժմեան Թանահատի վանքը շինած է Ապաղայ ղանի և Յակոբ կաթուղիկոսի, այն է առաջին կայե-

ցւոյ ժամանակ։ Ապազայ Ղանը իշխեց 1265ից լինչեւ 1282 թուականը<sup>1)</sup> իսկ Յակոբը կաթուղիկոսացաւ 1268 թուին և մեռաւ 1287 թուին<sup>2)</sup> ուստի այդ երկուսի միջոցը աւելումէ մօտ 17 տարի։ Պարզ է ուրեմն որ Թանահատի վանքի այժմեան շինութիւնը կառուցած է այդ 17 տարու ընթացքում այն է 1265 մինչեւ 1282 թուականը։ Սակայն այս տեղ ևս հետեւումէ ժամանակագրութեան սխալմունք։ Եթէ վանքի վերայ այժմ կայ արձանագրութիւն հայկական 700 թուականից, այդ ապացոյց է որ վանքը շինած է վերոյիշեալ արձանագրութիւնից շատ առաջ, իսկ Ապազայ դանի թագաւորելուց 14 տարի և Յակոբի կաթուղիկոսանալուց 17 տարի առաջ։ Հաւանական է ուրեմն, որ վանքը շինուած լինի տասնեւերեք երրորդ դարու առաջին կիսում։

Գալով հիւսիսային կողմում կանգնած մատրանը, հաւանական է որ նա շինուած է 727—1278 թուականին, ոմն Ամիր շահի ծախոսի բատորում եկեղեցու ներսը հիւսիսային խորանի դրան ճակատին գրուած է «Ես ամիրշահս տիի ղծախս ճադրանս յիմ հտլալ արդեանց և սպասաւորք սուրբ ուխտիս խոստադան Բ. պատարագ Դաւթի և Յակոբու տաւնին։ Կատարիչք օրհնին յԱստուծոյ թվ. Զիէ (727)։ Զալալեան արքեպիսկոպոսի գիրքը ասումէ մատուռնս այս որպէս երեխ՝ է դամբարան Ստեփաննոս եպիսկոպոսի Սիւնեաց, Յ)։ Իսկ Օրբելեան եպիսկոպոսը պատմումէ «Եւ շինեալ ի վերայ (Ստեփաննոսի եպիսկոպոսի) փոքրիկ մատուռ մի, զոր յետոյ յ728 թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ, գեղեցիկ յօրինուածով և երին զբաղան արքայն ի հիմ նորա» 4)։

Ուրեմն նահատակ եպիսկոպոսի մարմինը դրած է ոչ թէ մատրան մէջ, այլ եկեղեցու հիմքում։ Արդարեւ, եթէ, ըստ Օրբելեանի, ներկայ եկեղեցին շինեցին նահատակի նշխարների վերայ, ապա բնէ կարիք կար նշխարները թողնել եկեղեցուց

(1) Համէ. Հ. Գ. Երես 262.

(2) Աղնը, Հ. Գ. Եր. 268. և 283.

(3) Զալալ. Ճանապ. Հ. Բ. Երես 207.

(4) Օրբել. պատմ. 72. Լ.Ա.

գուրս և նորա համար շինել մի առանձին մատուռ։ Երեսումէ որ Զալալեանը աչքի առաջ չէ ունեցել Օրբելեանի յիշեալ խօսքերը։

Բացի այդ, վանքի արեւելեան պատի վերայ արտաքուստ կայ մի արձանագրութիւն, որ զետեղուած չէ Զալալեանի գրքի մէջ և որի պատճենը այս է։ «Կամաւն Աստուծոյ ես Յուսիկ շինեցի զայս Սրբանոցն և տուի Վարագա սուրբ Նիս (նշանա) սուրբ Ասեփաննոս վդ. (Վարդապետ) միաբանքս տվին Դ. Քամ քառասնից տաւնին։ Կատարիչք աւրչնին յԱստուծոյ. Թվիս ԶԿ. (760)։ Այսուղի խօսքը ո՞ր սրբանոցի համար է՝ գժուար է հասկանալ։ Մի գուցէ վանքին կարկատան է եղած կամ եղած է մօտը մի այլ շինութիւն։

Ամբողջութեամբ մեզ հասած այս վանքի արձանագրութիւններից ոչ մինը 700 թուականից առաջ և 788 թուականից յետոյ եղած չէ։ Սորանից ես եզրակացնում եմ որ ներկայ եկեղեցու շինելուց յետոյ մօտ 107 տարի տեսել է նորա առաւել գործունեայ շրջանը։ Հենց այդ միջոցում ևս եղած են եկեղեցու օգտին շատ զոհովութիւններ։

Բայց Ալէքսանդրապուտ մօտ, Ղանլիջայ գիւղում, Մարմաշինու վանքի մէջ ես աեսել եմ մի ձեռագիր ճաշոց, որ ինչպէս երեսումէ նորա յիշատակարանից, արտագրած է Գեղամայ Գաւառ գիւղում, 940 հայոց կամ 1491 Փրկչի թուականին։ Նորան տրտագրել է Յովհաննէս անուն կարգաւոր, որ եկել է Թանահատի վանքից ոոր է աթոռ ոուրբ հայրապետին։ Սիւնեաց տէր Ստեփաննոսի։ Ուրեմն 1491 թուականին ևս եղել է այստեղ, Ղարավանքում։ միաբանութիւն։

Մինչև անգամ մի հասարակ տառերով, մասամբ ջնջուած արձանագրութիւն ՌՃԴ (1014) թուից, որ կայ Թանահատի եկեղեցն արեւելեան պատի վերայ արտաքուստ, և որ չէ յիշվում Զալալեանի գրքի մէջ, ունի ինձ համար այն նշանակութիւնը, որ յիշեալ 1014 կամ 1565 թուականի, և գուցէ գորանից շատ յետոյ եղած է այդ տեղ կենդանութիւն։ Վեց հարիւր տարուց աւելի է որ կանգուն կայ այդ վանքը և մենք այսօր չգիտենք նորա անցեալը, միաբանութեան թիւը, այլ

վանահայր, բացի Միսիթար վարդապետը և Եփրեմ անունով մի վարդապետ, որ 797 թուին եղած է և յիշառակուռումէ եկեղեցու արեւմուեան գրան հարաւակովմի մի արձանագրութեան մէջ արտաքուսու: Խոկ եթէ հաւատ ընծայենք Օրբելեանի խօսքերին, պէտք է ընդունենք որ Թանահատի վանքը գոյութիւն ունի 1727 տարուց աւելի:

Այժմ տեսնենք մօտ հարիւր տարու ընթացքում ի՞նչ նուերներ է առացել վանքը զանազան անձինքներից:

ա.) Ոմն Միսիթար 700 կամ 1251 թուին նուիրել է իւր ձեռասունկ այգին և Գայլայից հողն:

բ.) Սանջար և Թաջմելիք նուիրել են (Թիւչկայ) Կիուաքարի և Հովուենց հողերը:

գ.) Մտինանայ 718—1269 թուին նուերել է իւր հայրենիքը, (երեխ Հողը):

դ.) Ոմն Անի և իւր ամուսին Սախոխ, Մուրագ փաշի հետ ընծայել են իւրեանց գնած այգին:

ե.) Սարգիսը նուիրել է իւր հողնացան հայրենիք:

զ.) Փանձաթաղ գիւղի տէր՝ ոմն Բենարդի, 797—1348 թ. նուիրել է յիշեալ գիւղում Մազմանենց և Աւնաշինենց այգիները:

է.) Ուքանը 700—1251 թուին նուիրել է Խալին և Էղանին հողերը:

ը.) Խութլուքէգը նուիրել է Աղալ տեղի հողը:

թ.) Սիմեոնը 788—1339 թուին նուիրել է իւր հայրենիքը:

ժ.) Ոմն Զումա և իւր կենակից Խոնդձէն նուիրել են Աւագական ջրի վերայ մի ջրաղաց:

Ուրեմն Թանահատի վանքը, 1251 թուիդ մինչև 1348 թուուկանը 97 տարում, ըստ արձանագրութեանց Զալալեանի, ստացել է անշարժ կայք ինը հաղ, լոր այգէ և մէ ջրաղաց: Բացի այդ եղած են գրամական և այլ ընծաներ: Այս երեսումէ և հետեւեալ արձանագրութիւնից, հարաւային պատի վերայ արտաքուսու, որ զետեղուած չէ Զալալեանի գրքում: «Կամաւն Աստուծոյ ես Պետրոս յիմ հալալ արդեանց ետու ծախս զանդակին, միաբանք սահմանեցին Ի. Ժամ երեման խաչին . . .»

Թանահատի վանքը ունի ընդամենը 29 արձանագրութիւն, որից 25 զետեղուած են Զալալեանի գրքի մէջ այլ և այլ վրիպակներով։ Մնացեալ լրացրի։ Սոցանից մինը լոկ թուականն է գմբեթի հարաւային կողմում, արձուի շուրջը «թվ. ԶԻԲ. (722)»։ Հաւանական է որ այս արձանագրութիւններից ոմանք կամաց կամաց կորչեն, ինչպէս կորել են եկեղեցու շինութեան արձանագրութեան սկիզբն և նոյնպէս Թեկզի արձանագրութեան քարը հարաւային պատիվերայ, արտաքուստ արևմտեան ծայրին մօտիկ։

Նարավանքի թուրք ընակիչները, առանց արգելքի, իւրեանց շինութիւնները աստիճանաբար մօտեցնում են վանքի շինութեանը և շուտով կըրջապատեն նորան։ Հետեաբար՝ նոքո կարող են ծածուկ պոկոտել վանքի քարերը իւրեանց պէտքերի համար։

Զիշշեմ արգեօք այսուեղ թէ ինչպէս Նօպէնը չարաչար ոխալգումէ ընդունելով այս վանքը Ամաղուի նորավանքի փոխարէն \*): Ոչ պակաս սխալմանց մէջ է ընկնում և Դ. Բագրածէն իւր հետազօտութեանց մէջ, սոյն այս վանքի վերաբերութեամբ \*\*): Նախ և առաջ պ. Բագրածէն չէ իմանում Թանահատի վանքի տեղը. երկրորդ՝ նա ասումէ՝ թէպէա Սիւնեաց պատմագիրը այս վանքի շինութիւնը հասցնումէ Քրիստոսի 181 թուականին, սակայն նորա կարծիքը չէ հաստատուում այժմեան բազմաթիւ արձանագրութիւններով։ Պ. Դ. Բագրածէն պէտք է լաւ իմանար որ Սիւնեաց պատմագիրը (Օրբելեան), ինչպէս վերը տեսանք, դնումէ 400 տարի առաջ հայ թուականից, ուրեմն ոչ թէ 181 այլ 151 տարի Քրիստոսի ծննդից յետոյ և այժմեան շինութիւնը վանքի Օրբելեանը ամենեկն չէ հասցնում յիշեալ թուականին, այլ նա պարզ ասում է որ 728 թուին տեղւոյն բնակիչները շինել են եկեղեցի։ Կասկած չկայ որ 1279 թուին կառուցած վանքի արձանագրութիւնները չեն վերաբերուիլ 151 թուականին Փրկչի։

(\*) Շապեն. Իոնիք. Պոմ արք. Երես 332.

(\*\*) Записки любитолій. кавк. арх. Ерես 141.

Որպէս զի Թանահատի վանքի մասին ասելիքս վերջացնեմ, Հարկ եմ Համարում ծանօթութիւն դնել սոորեւ՝ Զալալեանի գործի մէջ արտագրած այս վանքի արձանագրութեանց գլխաւոր վրիպակների և պակասորդների վերաբերութեամբ \*):

Թանահատի վանքից ուղղուելով գէպի արևելք, ճանապարհը տանումէ մեզ Արգեազու սուրբ խաչ վանքը։ Ես իջնում եմ Դարավանքից բլուրներով պատաժ ձորակի մէջ, ուր 200 քայլ յիշեալ վանքից հեռու, ճանապարհի եզրում ընկած է Մանուկը քահանայի խաչքարը։ «Ես մանուկ քահանայս կանգնեցի զիսչս բարեխօս հարազատ եղբաւր իմոյ Խաչատրոյ յաղաւթս յիշեցէք. թվ. ԶԻԶ (746)», բաւականաչափ սորանից

(\*)

Զալալ.	Ճանա- պարհ.	ՍԽԱԼ.	ՈՒՂԻՊ
երես 208.			
Չորրորդ արձա	Խաչեցելոյն Քրիստոսի.	Խաչեցելոյն Աստուծոյ.	
նազը. եր. 209.			
Ա. արձանագր	Կատարիչքն օրհնին....	Կատարիչք գրայս օրհնին.	
»	Պարոնայքս արձանագրեցաք	Պարոնայքս և միարանքս արձանագրեցաք.	
Դ.	Զարնավարին....	Զատինայզարին.	
Դ.	Ես Բենիարիտի Մամա	Ես Բենարդի Միքատա թռոն	
	Լիպարիտի տէր Տանձաթա-	Լիպարիտի տէր Փանձաթա-	
	ղին....	ղին.	
»	Տօնին զպատարագ և ով որ	Տօնի զ(6) պատարագ և ով	
	մեր տված վախճին...	որ մեր հոգւոյ տված վախճիս	
»	Թվին 21. Դ....	Թվին 21. Է.	
երես 210			
Ա. արձան. եր.	Առաջի սուրբ Նշանիս.	Առաջի Ա-արագայ Ա. Նշանիս	
211. Ա. արձ.	Եւ ավի Խ. գեկան.	Եւ. ավի ի (20) Դահկան.	
Բ.	Նշնը....	Նշնը	
Գ.	Յիմ Հալալ արդեանց	Յիմ Հալալ ընչեց	
Դ.	Խափանիչք դատին ի տեառ-	Խափանիչք դատին ի Տեառ-	
	նէ.	նէ. թվ. 21Բ.	
Ե.	Խոնդշին....	Խոնդշին.	
»	Սահմանեցին սուրբ. Խաչի	Սահմանեցին Գ. աւր պատա-	
		րագ սուրբ.	
Եր. 212. Բ, ար	Աւագ Սուլիմս...	Աւագ Սուլիմս.	
Ճանագ.			
Ե.	»		
Եր. 213			
Ա-իրջին արձան.	Ի Հալալ ընչեց մեզ հոգւոյ.	Ի Հալալ ընչեց մեր զհոգւոյ.	

անցած, նոյն ճանապարհի վերայ նորից հանդիպում ենք մի կանգնած խաչքարի, որ գրումէ «կանգնեցաւ խաչս բարեխօսութիւն Զալեսին և եղբարց իւրոց»:

Գնալով վերջապէս ես կանգնում եմ խոր ձորի մէջ մի առուակի ափում, որ հոսում է հիւսիսից հարաւ դէպի Մալիշկայ գիւղը և դէպի Արփաչայ գետը։ Առուակից բարձրանում եմ նորա ձախ ժայռուտ բարձր ափի վերայ, ուր ճանապարհը խոկոյն թեքւումէ դէպի հիւսիս և անցնումէ անտանելի քարակոյտների միջով և ուր կաքաւներն անգամ դժուարաւթեամբ են շարժուում։ Ահռելի քարակոյտներն ահագին տարածութիւն են ըռնում, սկսած հիւսիսային կողմում Դալին նակայ սարից դէպի հարաւ մինչև Մալիշկայ և Մօզ գիւղերը և արփաչայ գետը։

Այսպէս ահա աստիճան առ աստիճան մօտենում եմ այն սրբավայրին, որ մեծ անուն և հոչակ ունի ամբողջ Երևանի նահանգում և նորանից դուրս։ Այդ արգեազու Սուրբ Խաչ վանքն է։

(Նարանակելի)

ՔԱԶԲԵՐՈՒԿԻՒՄ.

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՑ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ ԲԱԴՐԵՒԱՆԴԱՑ.

(Նարանակելունիւն).

Գ.

— Ահա մի եօթնեակ ես անցաւ, մի օր ասաց Հասանիսանը. աչքս Բոլիխանի ճանապարհը մնաց. ի՞նչ եղաւ նա. ես ուղարկեցի նորան ևս 1000 զօրքով որ ինքն զվաշարշակերտ, Մաղա-